


Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ

- Հաշվիչ օգտագործել չի թույլատրվում:
- Յուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր:
- Մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:


3 միավոր գնահատվող խնդիրներ

1. Լևոնն ունի 10 ռետինե կնիք: Յուրաքանչյուր կնիքի վրա կա հետևյալ թվերից մեկը՝ 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9: Տարբեր կնիքների վրա տարբեր թվեր են: Լևոնը թղթի վրա տպում է «Կենգուրու» մրցույթի ամսաթիվը (տե՛ս նկարը): Քանի՞ կնիք է նա օգտագործում:



- (A) 5 (B) 6 (C) 7 (D) 9 (E) 10

2. Նկարում պատկերված են 3 թռչող նետեր և 9 անշարժ փուչիկներ: Երբ նետը դիպչում է փուչիկին, փուչիկը պայթում է, իսկ նետը շարունակում է թռչել նույն ուղղությամբ: Քանի՞ փուչիկի կդիպչեն նետերը:




- (A) 3 (B) 5 (C) 6 (D) 8 (E) 9

3. Սոնան 6 տարեկան է: Նրա քույրը՝ մեկ տարով մեծ, իսկ եղբայրը մեկ տարով փոքր է Սոնայից: Որքա՞ն է այս երեք երեխաների տարիքների գումարը:


- (A) 10 (B) 15 (C) 18 (D) 21 (E) 30

4. Նկարում պատկերված է հինգ պտուտակ՝ փայտի կտորի մեջ: Դրանցից չորսն ունեն նույն երկարությունը: Մեկ պտուտակն ավելի կարճ է: Ո՞ր համարի պտուտակն է կարճը:




- (A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5


5. Նկարում Սոֆի գատիկն է: Նա սիրում է պտուտակ: Պատասխանի տարբերակներում բերված նկարներից ո՞րը Սոֆիի նկարը չէ:



6. Անահիտը մեջտեղից ծալում է թղթի թերթը: Հետո նա դրա մի մասը կտրում է, ինչպես ցույց է տրված նկարում: Պատասխանի տարբերակներում բերված նկարներից ո՞րը կտեսնի Անահիտը, երբ բացի թղթի թերթը:



7. Մետրոպը երեք նետով կրակում է թիրախին (տե՛ս նկարը): Առաջին անգամ նա վաստակում է 12 միավոր, երկրորդ անգամ՝ 15 միավոր: Քանի՞ միավոր է վաստակում Մետրոպը թիրախին երրորդ անգամ կրակելուց:



- (A) 18 (B) 19 (C) 20 (D) 21 (E) 22

8. Պետա ճագարն ուներ 20 գազար: Ամեն օր նա ուտում էր երկու գազար: 11-րդ գազարը Պետան կերավ չորեքշաբթի: Շաբաթվա ո՞ր օրն էր նա սկսել ուտել իր գազարները:


- (A) Երկուշաբթի (B) Երեքշաբթի (C) Չորեքշաբթի (D) Հինգշաբթի (E) Ուրբաթ

4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Բարկենը պատկերներ է ստեղծում՝ օգտագործելով նկար 1-ում պատկերված սալիկից: Նկար 2-ում բերված հինգ պատկերներից քանի՞ սր կարող է ստեղծել Բարկենը:




- (A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5





նկար 2

10. Մարինեն ունի գետաձիու, շնաձկան, գորտի, մեղուգայի և ծաղիկի պատկերներ: Նա նկարում բերված աղյուսակի վանդակներից յուրաքանչյուրում տեղադրում է այդ հինգ պատկերներից մեկն այնպես, որ դրանք յուրաքանչյուր սյունակում և յուրաքանչյուր տողում լինեն ճիշտ մեկ անգամ: Պատասխանի տարբերակներում բերված պատկերներից ո՞րը Մարինեն պետք է տեղադրի «?» նշանով վանդակում:





- (A) (B) (C) (D) (E)

11. Արթուրը վանդակավոր թղթից կտրում է «քառակուսի» և «սեղան» մարմիններ (տե՛ս նկար 1): Այդ մարմիններից ամենաքիչը քանի՞ հատ պետք է օգտագործի Արթուրը՝ նկար 2-ում բերված նավը ստանալու համար:




- (A) 5 (B) 6 (C) 7 (D) 8 (E) 9

12. Վազգենը նկարում բերված պատկերի գույները փոխում է. սևը դարձնում է սպիտակ, սպիտակը՝ սև: Այնուհետև նա այդ պատկերը պտտում է: Պատասխանի տարբերակներում բերվածներից ո՞րն է Վազգենի ստացած նոր պատկերը:



13. Նավապետ Քուկը ցանկանում է նավարկել Ջատիկ կղզուց, այցելել իր քարտեզի յուրաքանչյուր կղզի և վերադառնալ Ջատիկ կղզի (տե՛ս նկարը): Այդ ճանապարհի ընդհանուր երկարությունը 100 կիլոմետր (կմ) է: Անապատ և Լիճ կղզիների միջև հեռավորությունը նույնն է, ինչ Ջատիկ և Ծաղիկ կղզիների միջև հեռավորությունը: Հրաբուխ կղզով անցնելու դեպքում: Որքա՞ն է Ջատիկի հեռավորությունը Լճից:




- (A) 17 կմ (B) 23 կմ (C) 26 կմ (D) 33 կմ (E) 35 կմ
14. Վարդի թփին կա 8 ծաղիկ: Ծաղիկների վրա նստած են թիթեռներ և ճպուռներ: Մեկ ծաղկի վրա նստած է մեկից ոչ ավելի միջատ: Ծաղիկների կեսից ավելին վրա միջատներ կան: Ծաղիկների վրա թիթեռների քանակը երկու անգամ մեծ է ծաղիկների վրայի ճպուռների քանակից: Քանի՞ թիթեռ է նստած ծաղիկների վրա:
- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

15. Նկարում պատկերված հնագույն նշաններից յուրաքանչյուրը համապատասխանում է 1, 2, 3, 4 և 5 թվանշաններից միայն մեկին: Ոչ ոք չգիտի, թե որ նշանը որ թվանշանին է համապատասխանում: Հայտնի է, որ՝

+ =
 + =
 + =

Պատասխանի տարբերակների նշաններից ո՞րն է համապատասխանում 3-ին:


- (A) (B) (C) (D) (E)
16. A, B, C և D գնդակների զանգվածներն են 10 գ, 20 գ, 30 գ կամ 40 գ (տե՛ս նկարը): Տարբեր գնդակներին համապատասխանում են տարբեր զանգվածներ: Ո՞ր գնդակի զանգվածն է 30 գ:
- (A) A (B) B (C) C (D) D
(E) Կարող է լինել թե՛ A, թե՛ B գնդակը:




5 միավոր գնահատվող խնդիրներ

17. Մարգարաշտում հանդիպեցին A, B, C, D և E մարզիկները: Նրանցից ոմանք ձեռքով բարևեցին միմյանց. A-ն և B-ն ձեռք սեղմեցին միայն մեկական անգամ, իսկ C-ն, D-ն և E-ն՝ երկուական անգամ: Հայտնի է, որ A-ն սեղմեց E-ի ձեռքը: Մարզիկներից ո՞ր երկուսը ձեռքով հաստատ չեն բարևել միմյանց:
- (A) C-ն ու D-ն (B) C-ն ու E-ն (C) B-ն ու C-ն (D) B-ն ու E-ն (E) B-ն ու D-ն

18. Կենգուրու Կենգայի տան սենյակները համարակալված են (տե՛ս նկարը): Նա մտնում է սլաքով ցույց տրված գլխավոր դռնով, անցնում որոշ սենյակներով և դուրս գալիս տնից A, B, C, D և E դռներից մեկով: Տան միջով անցնելիս Կենգան ամեն անգամ մտնում է այն սենյակը, որի համարն ավելի մեծ է այն սենյակի համարից, որտեղ նա գտնվում է: Ո՞ր դռնով է Կենգան դուրս գալիս տնից:
- (A) A (B) B (C) C (D) D (E) E




19. Նկարագարդ ապակյա պատկերը շրջում են, ինչպես ցույց է տրված նկարում: Պատասխանի տարբերակներում բերված պատկերներից ո՞րը կտեսնենք 3 շրջումից հետո:



- (A) (B) (C) (D) (E)


20. Նույնն թղթի վրա գրեց 1, 2, 3, 4, 5, 6, 7 և 8 թվերը, այնուհետև բաժանեց դրանք երկու քառյակների այնպես, որ այդ քառյակների թվերի գումարները հավասար լինեն: Պարզվեց, որ 1 և 3 թվերը գտնվում են միևնույն քառյակում: Պատասխանի տարբերակներում բերված թվերից ո՞րը կլինի 1-ի և 3-ի հետ նույն քառյակում:
- (A) 2 (B) 4 (C) 5 (D) 6 (E) 7

21. Նկար 1-ում պատկերված ժապավենը կարող է ամրացվել հինգ եղանակով: Նկար 2-ում պատկերված է մեկ անցքով ամրացված ժապավենը: Որքանո՞վ է մեկ անցքով ամրացված ժապավենը երկար բոլոր հինգ անցքերով ամրացված ժապավենից:



- (A) 4 սմ-ով (B) 8 սմ-ով (C) 10 սմ-ով (D) 16 սմ-ով (E) 20 սմ-ով
22. Ընտանիքում կա չորս երեխա՝ Մարիամը, Նարեկը, Անին և Լուսինեն: Նրանք 5, 8, 13 և 15 տարեկան են: Աղջիկներից մեկը գնում է մանկապարտեզ, Մարիամը՝ Նարեկից մեծ է, իսկ Մարիամի ու Անիի տարիքների գումարը բաժանվում է երեքի: Քանի՞ տարեկան է Լուսինեն:
- (A) 5 (B) 8 (C) 13 (D) 15 (E) Հնարավոր չէ որոշել:

23. Նանեն ցանկանում է 1-ից մինչև 7 թվերից յուրաքանչյուրը գրել նկարում բերված վանդակներում այնպես, որ յուրաքանչյուր վանդակում գրված լինի միայն մեկ թիվ: Երկու հաջորդական թիվ չի կարելի գրել երկու հարևան վանդակներում: Հարևան վանդակներն ունեն ընդհանուր կողմ կամ ընդհանուր գագաթ: Ի՞նչ թիվ կամ թվեր կարող է Նանեն գրել «?» նշանով վանդակում:
- (A) բոլոր յոթ թվերը (B) միայն կենտ թվերը (C) միայն գույգ թվերը
(D) միայն 4-ը (E) միայն 1-ը և 7-ը



24. Վիշապին հաղթելու համար Գևորգը պետք է կտրի նրա բոլոր գլուխները: Գևորգը սկսում է հերթով կտրել վիշապի գլուխները: Ամեն անգամ իրար հետևից 3 գլուխ կտրելուց հետո Գևորգը տեսնում է, որ վիշապի մեկ նոր գլուխ է աճում: Գևորգը հաղթում է վիշապին՝ կտրելով ընդամենը 13 գլուխ: Քանի՞ գլուխ ուներ վիշապը սկզբում:
- (A) 8 (B) 9 (C) 10 (D) 11 (E) 12